

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 7/4

24 փետրվարի 2015 թ.

Քննարկվեց «ՄՄՄ» ՍՊԸ 26.01.2015 թ-ի դիմումը որոշումը համապատասխան մարմինների կողմից կատարելու պարտավորեցնելու մասին:

«ՄՄՄ» ՍՊԸ-ի դիմումում բերված փաստարկները.

«ՄՄՄ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) 2012թ.-ի ընթացքում ՀՀ տարածք է ներմուծել ապրանքներ, որոնց համար հաշվարկված ԱԱՀ-ի գումարի վճարումը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածով սահմանված կարգավորումներին համապատասխան, հետաձգվել է:

Ընկերությունը ներմուծված ապրանքի մի մասը վերավաճառել է, դրա մի մասի օգտագործումից էլ ստացել է արտադրանք, որն իրացրել է ՀՀ տարածքում և դրա սահմաններից դուրս (գրոյական դրույքաչափով հարկվող գործարքներ): Այնուհետև Ընկերության գործունեության արդյունքում գոյացել է ավելացված արժեքի հարկով հարկման ենթակա օբյեկտ (համապատասխան գործարքների (գործառնությունների) ամբողջ արժեքը (շրջանառությունը)), որից Ընկերությունը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկել, ԱԱՀ-ի հաշվարկում որպես կրեդիտ (վճարման ենթակա ԱԱՀ-ի գումար) ներառել և ավելացված արժեքի հարկը վճարել է ՀՀ պետական բյուջե:

Այդ դեպքում հարկերի հավաքագրմամբ զբաղվող վարչական մարմինը որևէ խախտում չէր արձանագրել, սակայն դրանից հետո, հետաձգված ԱԱՀ-ի գումարի վճարված լինելու հանգամանքի անտեսմամբ, Ընկերությունից պահանջում է նույն հարկվող օբյեկտի համար կրկին վճարել ԱԱՀ, որպիսի պահանջը վերոգրյալ իրավական նորմերի պահանջներին չի համապատասխանում:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը «ՄՄՄ» ՍՊԸ-ի կողմից 11 հունիսի 2014թ.-ին ներկայացված վարչական բողոքի հետ կապված քննարկումների ընթացքում նշել է, որ եթե «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածի 3-րդ մասի մինչև 2013թ.-ի հունվարի 1-ը գործող խմբագրությամբ մաքսային մարմինների կողմից հաշվարկված ԱԱՀ-ի գումարները որպես մաքսային մարմինների կողմից պետական բյուջե հավաքագրվող գումարներ վճարվելու պայման նախատեսված չի եղել, ապա նույն հոդվածի 2013թ.-ի հունվարի 1-ից հետո գործող խմբագրությամբ հստակ սահմանվել է, որ մաքսային մարմինների կողմից հաշվարկված ԱԱՀ-ի գումարները վճարվում են որպես մաքսային մարմինների կողմից պետական բյուջե հավաքագրվող գումարներ:

Քննարկվող դեպքում, Ընկերությունը «Ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով հայտարարագրված ապրանքների ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հետաձգված ԱԱՀ-ի գումարները մինչև հետաձգման ժամկետի լրանալը վճարել է ՀՀ պետական բյուջե: Սակայն, մաքսային մարմինների կողմից հաշվարկված ԱԱՀ-ի գումարները որպես մաքսային մարմինների կողմից պետական բյուջե հավաքագրվող գումարներ վճարելու փոխարեն վճարվել է որպես հարկային մարմինների կողմից պետական բյուջե հավաքագրվող գումարներ, իսկ մյուս մասը պետք է հաշվանցվեր ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով պարտավորությունների դիմաց... («ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 6.1 հոդված):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույթներով Հանձնաժողովը եզրակացրել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՄՄՄ» ՍՊԸ վրա դրված պարտականությունները բովանդակային առումով ըստ էության կատարվել են, ընկերության բողոքը վիճարկվող որոշումներն անվավեր ճանաչելու վերաբերյալ ենթակա է բավարարման: Արդյունքում Հանձնաժողովի 15 հուլիսի 2014 թվականի 8/11 որոշմամբ չեղյալ են համարվել ՀՀ ԿԱ ՊԵԿ Արարատյան տարածաշրջանային մաքսատան պետի 2014 թ-ի մայիսի 20-ի թիվ 0021-ից մինչև թիվ 0057 որոշումները:

Հանձնաժողովի 15 հուլիսի 2014 թ-ի թիվ 8/11 որոշման ընդունումից անցել է ավելի քան 6 ամիս, սակայն մինչ օրս հարկային մարմինների կողմից հետաձգված ԱԱՀ-ի մասով վերահաշվարկ չի կատարվել: Միաժամանակ ընկերությունը հայտնում է, որ մաքսային մարմիններին է ներկայացվել 2012 թ-ին ՀՀ պետական բյուջե վճարված ԱԱՀ-ի գումարների վերաբերյալ տեղեկանք (հարկային մարմինների կողմից տրամադրված), որին ևս որևէ նշանակություն չի տրվել:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ ընկերությունը խնդրում է պարտավորեցնել կատարել Հանձնաժողովի 15 հուլիսի 2014թ. թիվ 8/11 որոշման պահանջները:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

Սույն գործում առկա ապացույցների, ինչպես նաև Ընկերության դիմումով բերված փաստարկների ուսումնասիրության ու գնահատման արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ ընկերության կողմից 2012 թ-ի ընթացքում վճարված ավելացված արժեքի հարկի գումարը կազմել է ընդամենը 81.410.000 դրամ, իսկ 2013 թ-ի ընթացքում՝ 102.177.500 դրամ:

Ստորև ներկայացվում են «ՄՄՄ» ՍՊԸ կողմից 2012 և 2013 թ.թ.-ի ընթացքում վճարված ԱԱՀ-ի գումարների վերաբերյալ աղյուսակը:

Վճարման ամսաթիվը	Վճարված ԱԱՀ-ի գումարը (դրամ)	Վճարման ամսաթիվը	Վճարված ԱԱՀ-ի գումարը (դրամ)
24.08.2012	7.000.000	29.03.2013	333.300
19.09.2012	3.350.000	11.04.2013	567.300
05.11.2012	18.500.000	15.01.2013	9.400.000
29.11.2012	19.800.000	31.01.2013	8.550.000
30.11.2012	1.500.000	11.04.2013	374.600
30.11.2012	16.000.000	16.04.2013	2.700.000
03.12.2012	160.000	05.09.2013	446.300
07.12.2012	15.100.000	10.12.2013	4.400.000
		05.04.2013	300.000
		09.04.2013	1.145.500
		13.04.2013	1.230.000
		16.04.2013	1.110.000
		31.05.2013	220.000
		23.09.2013	340.000
		31.10.2013	3.000.000
		17.09.2013	200.000
		19.09.2013	815.000
		24.09.2013	444.500
		25.09.2013	555.500
		30.10.2013	3.200.000
		07.05.2013	9.000.000
		11.09.2013	263.100
		03.10.2013	11.200.000
		28.02.2013	8.300.000
		10.09.2013	423.000
		29.10.2013	2.609.400
		30.10.2013	400.000
		28.06.2013	12.600.000
		26.09.2013	18.050.000
Ընդամենը	81.410.000		102.177.500

Հարկ է նշել, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածի 3-րդ մասի մինչև 2013 թ-ի հունվարի 1-ը գործող խմբագրության համաձայն մաքսային մարմինների կողմից հաշվարկված ԱԱՀ-ի գումարները որպես մաքսային մարմինների կողմից պետական բյուջե հավաքագրվող գումարներ վճարվելու պայման նախատեսված չի եղել: Մասնավորապես, նշված օրենքի 6.1-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Սույն հոդվածի առաջին մասում նշված ապրանքների մասով մաքսային մարմինների կողմից հաշվարկված ԱԱՀ-ի գումարները վճարվում են (բացառությամբ սույն մասով սահմանված դեպքերի) պետական բյուջե»: Նշված իրավանորմի դրույթներից հետևում է, որ 2012 թ-ի ընթացքում ընկերության կողմից վճարված ԱԱՀ-ի գումարները կարող են դիտվել որպես «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածի համաձայն վճարված գումարներ:

Ինչ վերաբերվում է 2013 թ-ի ընթացքում վճարված ԱԱՀ-ի գումարներին, ապա համապատասխան վճարումները հավաստող փաստաթղթերի գերակշիռ մասում վճարման նպատակը նշված է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույթներով, ինչպես նաև հիմք ընդունելով Հանձնաժողովի 15.07.2014 թ-ի թիվ 8/11 որոշումը, Հանձնաժողովը գտնում է, ընկերության կողմից 2012 և 2013 թ.թ.-ի ընթացքում վճարված ավելացված արժեքի հարկի գումարները, համապատասխանաբար՝ 81.410.000 դրամ և 102.177.500 դրամ, անհրաժեշտ է դիտել որպես «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածով նախատեսված նպատակի համար կատարված վճարումներ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ՖՆ Արարատյան տարածաշրջանային մաքսատանը կատարել համապատասխան ձևակերպումներ՝ ընկերության կողմից 2012 և 2013 թ.թ.-ի ընթացքում վճարված ավելացված արժեքի հարկի գումարներն ընդունելով որպես «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածով նախատեսված նպատակի համար կատարված վճարումներ:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ